հեռագիրը ուրախութեամբ այն միջոցին ծակուիլն ալ կ'իմացընէր, որով երկու կողմի գործաւորքն ալ կեցցէ՛ Իտալիա աղաղակով մէկզմէկ կ'ողջունէին։

Այս գործիս յաջողութիւնը գիտութեան ուրիշ յաղթանակ մըն է. և որ զարմանալին է, անանկ ժամանակ իր լրումը կ'առնու, որ քիչ մը հեռու՝ Մոն Սընիին միւս կողմը, կոչտ բռնութեան մը ուժն ալ իր զարհուրելի յաղթանակը կ'ընէ։

Անանկ մեծագործ ձեռնարկի մը մէջ Գաղղիան ալ իր պարծանաց մասն ունի. բայց հիմայ իր թշուառութիւնները այնչափ են՝ որ տարակոյս չկայ որ և ոչ ուրախութիւն մը զգալուն նշանը պիտոր տայ։

Այսպէս յեղյեղուկ է մարդկային փառքը։

Կղզիի մը աներևութանալը։ — Խաղաղական Ովկիանոսին մէջ վերջի ատենները արտաքոյ կարգի դէպք մը հանդիպեր է։ Բլոք նաւապետը Իքիքէն Լոնտրա դառնալու ճամբայ ելլալով, կը պատմէ թէ Եպրիտեան կղզիներուն քովէն անցած ժամանակը դիտեր է՝ որ Արշալոյս մականուանեալ կղզին՝ բոլորովին անյայտ եղած է։ Անոր և ոչ պզտի նշան մը կայ ովկիանոսին այն տեղը՝ ուր առաջ կը գտնուէր։

Արշալոյս կղզին նոր Եպրիտեան կղզիներուն մէջէն ամենէն ընդարձակն և ամենէն արդաւանդն էր։ Գրեթէ 36 մղոն երկայնութիւն ունէր և 5 մղոն լայնութիւն. ծանօթ էր միշտ որ Դաննա և Ամպրիմ կղզիները հրաբղխային էին. սակայն միւսներուն համար հասարակաց կարծիքն էր թէ աղատ են ամենեին ինչ և իցէ հրաբղխային աղդեցութենէ։ Թէ ինչպէս և երբ Արշալոյս կղզին հանդերձ իր բնակիչներովը խաղաղականին ջրերուն տակը ընկղմեր են, մինչև հիմա ամենեին տեղեկութիւն մը չունինք. սակայն անտարակոյս Բլոք նաւապետն Անգղիա հասնելով, կարենայ պիտի այս դժբաղդ պարագային վրայօք աւելի տեղեկութիւններ տալ։

Նարնջի գինի։ — Սպանիացի լրագիր մը կը պատմէ թէ՝ Սպանիոյ հարաւային կողմը անանկ առատ է աղէկ տեսակ նարնջի բերքը, որ կարելի չըլլալով պատշաճ գնով մը օտար տեղեր ծախու ղրկել, շատ մարդիկ զանոնք գինի կը շինեն, որ պանչելի տեսակ մը կ'ըլլայ, և համը շատ կը նմանի Մատերայի գինւոյն։ Մամլոյ միջոցաւ ճզմելով՝ հոյզը կը հանեն, ապա խաղողոյ հոյզին նման թող կու տան որ խմորի, և յետոյ տակառներու մէջ կ'առնեն, առանց ալքոոլի կամ ջրի հետ խառնելու։

Մ. ԱՏՏԻՂԻՈՍ ՀՌԵԳՈՒՂՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Յայտարարութիւն.

Փառաւորեալն անուանց՝ որովք Հռովմէականն երբեմն պանծացաւ պետութիւն, հնութեանն առ հասարակ զուգաձայնութեամբ նախամեծարն է միշտ վիճակեալ գահու 'ի պարս անդ՝ անուն Ատտիղիոսի Հռեգուղոսի։ Այն՝ որ ոչ զարիւն իւր միայն յոգուտ հայրենեացն ծախեաց և զքրտունս և զամենայն ջան, այլ և զիւրն չարադիպութիւն 'ի շահ նմին գիտաց վերաբերել։

Լի աւուրքք և արդեամբք վարեցաւ անբաղդութեամբ գերի 'ի Կարթեդոն։ Այս քաղաք իբրև զարհուրեալ 'ի բաղդէ նախանձաւորին Հռովմայ հարկեցաւ խօսել հրեշտա-

կութեամբ ընդ նմա 'ի խաղաղութիւն, և կամ գոնէ 'ի փոխանակութիւն գերութեանն, կամաց իւրեանց գործի աջողակ համարեցան Կարքեդոնացիք զՀռեգուղոս, որում ազատութիւն առաջի կայր 'ի հաստատել դաշանցն։ Վասն որոյ ընդ լիբէացի պատգամաւորին առեալ արձակեն և զնա 'ի Հռովմ, պահանջեալ նախ երդումն 'ի նմանէ՝ դարձ առնել անդրէն 'ի կապանս իւր, եթէ ոչինչ յաջողեսցի։

Ընդ անակնկալ գալուստ Հռեգուղեայ այնպէս ցնծութեամբ խայտաց Հռովմ, որպէս էր ուրախութիւն ամացն հնգից՝ յորմէհետէ զգերութեան նորա առեալ էր զբօթ։ Ցաղատութիւն այսքանոյ դիւցազին ապաքէն թեթև էր յաչս նորա ամենայն պայման ծանր. սակայն Հռեգուղոս փոխանակ զանձին հայթհայթելոյ փրկութիւն՝ սիրով քաղաքակցացն և մեծ համբաւոյն, դարձոյց զամենայն 'ի խորշեցուցանել զնոսա յընդունելութենէ խորամանգ դաշանցն թշնամեաց։ Եւ համոզեալ զնոսա, առաջի ունելով զարտասուս որդւոց, զտոհմակցաց աղաչանս, զթախանձանս բարեկամաց, զծերակուտին և զհամօրէն ժողովրդեան, որ չուրջ խռնեալ զնովաւ զուն գործէին խափանել զնա, դարձաւ երկիւղած միօք զուարթագին յանշուշտն մահ, որ մնայր նմա 'ի Լիբիա. զուխտապահութեան հրաշատիպ օրինակ և զարիութեան յետնոցն թողեալ։

Ապպիան, Զոնարաս, Կիկերոն, Ովրատիոս։

ԴԵՐԱՍԱՆՔ.

ՀՌԵԳՈՒՂՈՍ,
ՄԱՆԼԻՈՍ, Բդէաշխ։
ՊՈՊՂԻՈՍ,
ԱՏՏԻՂԻՈՍ, } Որդիք Հռեգուղեայ։
ԼԻԿԻՆԻՈՍ, Հասարակապետ ծերակուտեան։
ԱՄԻԼԿԱՐ, Հրեշտակ կարքեդոնացի։
ՄԱԳՈՆ, Սեպուհ կարքեդոնացի, ստրուկ Պոպղեայ։

Տեսարանն է արտաքոյ Հռովմայ, չուրջ զտաճարաւն Պելլոնեայ։

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԻԼ Ա

ԱՏՏԻՂԻՈՍ ԵՒ ԼԻԿԻՆԻՈՍ

Լիկ. Եթէ դու իցես, սիրեցեալդ իմ Ատտիղիէ. բամբէ, 'ի խուռն աստ ամբոխին և նուիրակաց ոչ կարծէի գտանել զորդին Հռեգուղեայ։

Ատ. Առ սեամս աստ բդեշխին ակն ունիմ եղանելոյ։ Կամիմ գոնեա յամօթ առնել զնա. ոչ ևս ժամանակ է ակնածութեան, Լիկինիէ։ Հայրն մեր անդ 'ի Լիբիա 'ի տառապանս ըմբռնեալ հեծէ. արդ և հնգեակ հոլովեցան ամք, և չէ ումեք փոյթ ազատել զնա։ Ես միայն 'ի Հռովմ յիշատակաւ նորին արտասուեմ. եթէ և ես լռեմ, ո՞ այն որ խօսեսցի վասն նորա այնուհետև։

Լիկ. Մի՛ այդպէս. անիրաւեն բանքդ. և ո՞ արդեօք իցէ որ ոչ ցանկասցի դարձին Հռեգուղեայ. ո՞ այն որ ոչ թեթև ինչ ստացուած գրեսցէ զընդոտնեալն Լիբիա, եթէ այդպիսի ոք քաղաքացի կշռեսցի Հռովմայ։ Զինէն՝ համբուն և խօսիմ ինչ ոչ. հայր քո է, և դու ինձ իբրև եղբայր սիրասուն։ Նովաւ ես 'ի զինուորութեանս վարժեցայ արուեստ. և որ յիմն ինչ նշողէ հռովմէական սրտի արժանի, նա ինքն նա շնչեաց 'ի յիս։

Ատ. Սակայն դեռ ևս չտեսանեմ ինչ...

Լիկ. Եւ զի՞նչ արդեօք իշխէի սակաւիկան ոք այր 'ի փրկանս նորուն։ Ոչ փառաւորութիւն դատաւորի ինձ ստգրող զհասարակապետութեանս նուաճել գաւազան. այլ զի իշխանութեամբս և թախանձանօքս առցեն զօրութիւն։ Ես այժմիկ հասարակապետ ժողովրդեան՝ 'ի դիմաց նոցա համարձակաձայն խնդրեցից...

Ատ. Կացցեն այժմ այդ ուժգնագոյն դեղք 'ի վերջին տագնապ. մի՛ հարցուք խռով ժողովրդեան և ծերակուտին։ Քաջ գիտես զկարգ անհնարին երկաքանչիւր նախանձաբեկ են դաշերեց իշխանութեան։ Մերթ մին և մերթ միւսն նովաւ զեղծանի. և զտուրս միոյն՝ միւսն առնէ ապախտ։ Է՛ մեզ դիւրագոյն ինչ այլ ելս առաջիկայիս խմանալ գործոյ։ Գիտեմ զի Հռովմ ընդ հուպ ակն ունի դեսպանի 'ի Կարքեդոնայ. 'ի տաճար դիցն Պելլոնայ հոլոնի աւագանին՝ լսել առ 'ի նմանէ պատգամացն. անդ 'ի դէպ է բդեշխին փրկանս արկանել Հռեգուղեայ։

Լիկ. Մանլիոսի. ա՛հ, յուշ լիցի քեզ զի անդստին յառաջնմոտիոյն հին նախանձորդ է նա հօր քում. զուր է ապաւինել 'ի նա. մախացող է նորա Մանլիոս։

Ատ. Մանլիոս Հռովմայեցի է. և ոչ իշխեսցէ երբեք՝ իւրում թշնամութեանն գործի 'ի ձեռս զիշխանականն առնուլ զօրութիւն։ Թո՛յլ տուր ինձ խօսել. լուիցուք զինչ ունիցի ասել։

Լիկ. Այլ աղէ դու՝ գոնէ այլուր, մի՛ աստ զբա-

Նիւք անկանիր ընդ նմա. մի՛ 'ի խառն աստ ամբոխին տեսցէ զքեզ պաշարեալ:

Աս. Այդ իսկ են կամք իմ, աստ 'ի սոյն վիճակ տեսանել զիս նմա և յամօթ լինել, և լու 'ի լու ամենայն հրապարակիս 'ի պայքար մտանել:

Լիկ. Ահա նա ինքն գայ:

Աս. Տեղի տուր:

Լիկ. Եւ ո՛չ ողջունի միոյ անանս զիս արժանի: (Ելանէ):

Աս. Որդի եմ ես այժմ, Լիկինիէ, և ոչ բարեկամ:

ՏԵՍԻԼ Բ

ԱՍՏԻՂԻՈՍ ԵՒ ՄԱՆԼԻՈՍ

Աս. Մանլիէ, անսա ինձ վայր մի և լուր:

Ման. Եւ արժանի՞ ինչ արդեօք համարիցիս քեզ զատեղիս:

Աս. Ոչ էր, ցորչափ յաղատն դիւցազանց յիմ հայրենաքաջայաղթ պանծայի. այլ արդ տեղիս 'ի դէպ և արժան որդւոյ սարկին:

Ման. Առ ի՞նչ գալուստ քո:

Աս. Առ ինչ գալուստս. ա՛հ, ցե՞րբ է այդ՝ զի աշխարհի 'ի սքանչումն և Հռովմայ յամօթ նախատանաց՝ մաշեսցի Հռեգուղոս յանարգ ծառայութեանս: Հօծ են աւուրք, և ամիք 'ի տարիս հոծեալ թանձրանան. և ոչ ինչ է փոյթ զարկաբար նորա կենացն: Որո՞ց յանցանաց ապրիտուր լիցին այս անյիշատակ մոռացօնք Հռովմայ. մի՛ թէ սիրոյն հայրենեաց՝ առ որով արհամարհեաց զորդիս իւր և զանձն. մի՛ եթէ վեհագոյն և արդարասէր անարատ սրտին. մի՛ երբեք ծայրացելոյ խուրումն անընչասէր աղքատութե: Ո՜հ, զի՞արդ որ զօդս զայս հնչիցէ՝ մոռացի զՀռեգուղոս. զի՞նչ տեղի լիցէ 'ի Հռովմ որ ոչ զնմանէ գոչիցէ առ ձեզ. պողոտայքս, սոքա խոնարհեցան ոտից յաղթանակաց նորուն ճեմելիք. տաճարք, օրէնս նախախնամողականս անդուստ մեզ բարբառեցաւ. պատուարքդ, ուր ծերակոյտն զիրարի, անդ բազում անգամ 'ի նորա իմաստութենէն հասարակաց տնտեսեցաւ փրկութիւն: Մուտ 'ի մեհեանս, արի, Մանլիէ, ել 'ի Կապիտոլիոն, և ասա ինձ, ո՞ պսակեաց զնոսա գունակ գունակ դրօշուք օտարաց ո՛ր 'ի Լիբիոյ՝ ո՛ր 'ի Սիկիլիոյ և ո՛ր 'ի Տարենտոյ: Սոքա այս նուիրակք որ քեզն կարապետեն, այս՝ որ զքեզ վառի հիւպատեան ծիրանի՝ երբեմն և զՀռեգուղեաւ փարէին. և արդ անայցելու անտեսի 'ի գեղջս մեռանել չիք ինչ այլ նմա՝ բայց իմ արտասուք, այլ և սոքա անպտուղ ցօղեալք: Ա՜հ, հայր իմ, ո՜հ Հռովմ, ո՛յ ապաշնորհ քաղաքացիք:

Ման. Ցիրաւի ուրեմն իցեն ցաւքդ, Ատտիլիէ, այլ ոչ նոյնպէս և բողոքդ: Եւ մեզ մեծապէս է ցաւ ընդ բաղդն Հռեգուղեայ. ոչ ինչ եմք անտեղեակ զոր միանգամ աննուէրն Կարքեդոն հեղու զնովաւ վիշտս չարչարանաց:...

Աս. Է՛հ, ոչ Կարքեդոն աննուէր իցէ: Կարքեդոն զոխերիմն իւր տանջէ թշնամի, Հռովմ զիւրն հաւատարիմ մատնէ քաղաքացի. նա զոր կրեաց առ 'ի նմանէ թշնամանս՝ անձին յուշ ածէ, սա զքրտունս երկոց նորա 'ի մոռացումն ձգէ. մին զիւրոց անարգանացն լուծանէ զվրէժ, միւսն զնա զպատուհասիւ ածէ՝ զի զճակատս նորա յանթառամ պսակեաց դափնի: Արդ ո՞ արդեօք աննուէրն իցէ. Հռո՞վմ եթէ Կարքեդոն:

Ման. Եւ զի՞ պարտ իցէ գործել:

Աս. Թող փոխանակ յառաջ ածցէ ծերակոյտն, և արկցէ փրկանս Լիբէացի դեսպանին:

Ման. Քո՛ Ատտիլիէ՝ որդւոյ է բարբառ. ինձ իբրև բդեշխի արժան է գործել: Եթէ խնդիր այդպիսի փոխանք իցեն Հռովմայ, հարցափորձի պէտք են: Որոց միանգամ 'ի կապանս ընտելացան ձեռք...

Աս. Ուստի՞ խրատեցար զայդ անաչառութեան միտս:

Ման. Ակներև կան ինձ ընտանի յարացոյցք:

Աս. Այլ աղէ ասա, եթէ միշտ ընդ հօր մերում ոխութեամբ եղեր:

Ման. Ի՞մ մեղ է եթէ 'ի պարտութիւն մատնեցաւ նա և 'ի գերութիւն թշնամեաց:

Աս. Զև նորա 'ի պարտութիւն էր մատնեալ, բազում անգամ ուսոյց քեզ...

Ման. Ատտիլիէ զարդիս ծերակոյտն բոլորեալ իցէ, ոչ ևս է ինձ օրէն յապաղել այսրէն. միւսոյ աւագանւոյն ուստ իմաստս գիւրամաքելիս, իցէ թէ և զիմ խստութիւն 'ի դերև հանցես. զի ես Հռովմայ բդեաշխ եմ և ոչ թագաւոր: Ցաւս քո անագորոյն թուեցայց, և ինձ ժանտ կարդայցես. բայց ոչ միշտ աններդ դատաւոր են ցաւք: Վիշտ են ինձ աղէտքդ, այլ քաւեալ եմ ես, եթէ բաղմաց օգուտ՝ քեզ միայնոյ վնաս եղիցի: (Ելանէ):

ՏԵՍԻԼ Գ

ԱՍՏԻՂԻՈՍ, ապա ՄԱԳՈՆ

Աս. Ապա իմ 'ի բդեշխից անտի հատաւ ակնկալութիւն. սա թշնամի է, միւսն բացական. յօգնութիւն ժողովրդեան եղէց ապաստան: Հա՛յր իմ եկեսցէ, յո՞ր բաղդ կեղակարծ կենացդ և ազատութեան կախեալ կայ սահման:

Մագ. Ատտիլիէ, Ատտիլիէ:

Աս. Առ իմէ՞ տագնապդ:

Մագ. Հրեշտակն Լիբէացի հասեալ է:

Աս. Ոչ այդպէս ինչ ցնծութեան է արժանի համբաւդ:

Մագ. Ունիմ ինչ այլ մեծագոյն:

Աս. Զի՞նչ իցէ:

Մագ. Ընդ նմա է և Հռեգուղոս:

Աս. Հա՞յրն իմ:

Մագ. Հայր քո:

Աս. Ա՜հ, Մագոն. խաբեցա՞ր և կամ զիս արդեօք խաբես:

Մագ. Ոչ. տեսի ես զնա, սակայն առ հասարակ...

ՏԵՍԻԼ Դ

ԱՍՏԻՂԻՈՍ, ՊՈՊԼԻՈՍ, ՄԱԳՈՆ

Աս. (տեսեալ զՊոպղիոս): Պոպլիէ՛:

Պոպ. Եղբայր իմ, ո՛չ յայլմէ լինիմ. Հռեգուղոս 'ի Հռովմ է:

Աս. Ո՜հ ձայնիդ աւետեաց, ո՜վ զեղումն բերկրու-

թեան. ո՛ւր իցէ, ո՛հ, տար զիս առ նա. ընթացուք...

Պոպ. Այլ դեռ չէ ժամ. նա արդ ընդ Թշնամի պատգամաւորին՝ ծերակուտին մնայ յանդիմանութեան:

ԱՏ. Ո՞ւր տեսեր զնա:

Պոպ. Գիտուն ես զի ինձ Շահապիս է վանս առ հիւրոց դեսպանաց. լուր լուայ գալստեան հրեշտակին Կարքեդոնայ, ձեպեցի 'ի հանդիպումն նորա 'ի նաւահանգիստ անդր. կարծէի լլրէցի զոմն տեսանել զառաջեաւ, և ահա տեսանեմ զհայրն:

ԱՏ. Զի՞նչ նա ասաց, և դու զի՞նչ:

Պոպ. Հասեալ իմ անդր տեսանեմ զնա կացեալ առ ափն ծովուն անքթիթ 'ի Կապիտոլիոն դիտելով, որ փոքու մասամբ նշմարի անդուստ: Ընդէն ձիչ բարձեալ, ա՛հ հայր իմ սիրելի, ընթացայ և զաջն համբուրել խնդրէի: Լուաւ նա և դարձաւ և ընդ կրունկն վերջոտնեաց. և նովին անժպիտ դիմօք որով ընթադրեալ սաստնեցոյց զՆիբիա, ծառայք 'ի Հռովմ, ասէ, ոչ են Հարք: Կամէի երկրորդել, սակայն նորա հարցեալ եթէ ծերակուտին ակմբեալ իցէ և ո՛ւր, կարձեաց զիս: Լուաւ, և առանց ինչ ընդ բանս ածելոյ ընդ այն հետևեաց: Երադեցի ազդ առնել բդեշխին:

ԱՏ. Ո՞ւր իցէ նա, չտեսանեմ աստ շուրջանակի զնուիրակն . . .

ՄԱԳ. Եւ գնաց նա 'ի տաճար անդր Պելլոնայ:

ԱՏ. Ծառա՞յ ուրեմն դարձաւ առ մեզ Հռեգուլոս:

Պոպ. Այո. սակայն գիտեմ զի դաշինս խաղաղութեան բերէ. և բաղդ նորա 'ի նորին ձեռս է:

ԱՏ. Ո՛ գիտէ, եթէ ընկալցի՞ Հռովմ զդաշինսն:

Պոպ. Եթէ տեսցես զհայրդ 'ի ծոց իւր ժողովէ զնա Հռովմ, ոչ ինչ երկմտիցես: Խելայեղեալ իմն են առ հասարակ 'ի խնդութենէն, Ատտիլիէ. խլրունելոյ ամբոխին անձկանան պողոտայք. այր ընկերի իւրում ձայն տայ, և այլ այլում մատնանիշ զնա ցուցանէ. ո՛հ, որպիսի՜ անուանս լսէի ձայնել նմա, զհայրդ և զյոլովից տեսանէի զարտասուսն թացեալ 'ի խանդաղատանացն: Զի՞նչ արդեօք իցէ տեսարանս, Ատտիլիէ, 'ի սիրտ որդիական:

ԱՏ. Ո՞ւր իցէ Լիկինիոս, խնդրեսցուք զնա, թերակատար է խնդութիւնս անհաղորդ նմին: Վշտացաւ ընդ իս, խնդասցէ և ընդ իս: (Երթան):

ՏԵՍԻԼ Ե

ՊՈՊԼԻՈՍ, ՄԱԳՈՆ

Պոպ. Ողջամբ մնա, Մագոն:

ՄԱԳ. Լուր ինձ, քաջդ. ո՞չ գիտես զանուն կարքեդոնացի դեսպանին:

Պոպ. Այո. Ամիլկար անուն է նորա:

ՄԱԳ. Եթէ որդի՞ն իցէ Աննոնի:

Պոպ. Նոյն ինքն ամենևին:

ՄԱԳ. (ցածր): Ա՜հ, բարեկամն իմ, գերեգարձն իմ:

Պոպ. Այլազգունեցի՞ն երեսք քո. մի եթէ դաշնաւոր ինչ իցես ընդ նմա, դաւել զիմ առ քեզ միամտութիւն, որով 'ի գերութենէ փութացես զքեզ յազատութիւն հանի:

ՄԱԳ. Փա՛ռ յինէն քաջազունդ՝ այդքան ինչ առ քեզ ապաշնորհ նենգութիւն: Իքեզ և յԱտտիլիոս այնպէս իմն տեսի զթութիւն՝ առ բաղդն իմ, որպէս զի չզգալ անգամ և կապանացս. և անշնորհին ապախտաւոր գտանիմ՝ եթէ նենգեմ ինչ լեզուաւս: Հնապա և զսիրտ իմ ողջոյն սեան մօք հանից քեզ 'ի վեր. գիտասցէ տէր իմ. . .

Պոպ. Լուռ լե՛ր 'ի տխրական քոյին խոստովանութենէդ, մի զաւուրս քաղցրութեան թունեսցուք դառնութեամբ: (Երթան հանդերձ):

ՏԵՍԻԼ Զ

ՄԱԳՈՆ

Եթէ ճշմարիտ իցէ՝ զի տեսից այսօր զբարեկամն իմ և զգերեգարձ, զնա Ամիլկար, ընդ որում կապեցաւ ողիս յապարէզ մարտին, այն ինչ անկեալ պատէին զմարմնովս գերութեան կապանք: Ա՜հ, տակաւին տեսանեմ զձեռն նորա կարկառեալ առ իս, և լսեմ զխրախուսական ձայնն, եթէ

Մի ինչ խեթ մնաց անյոյս երկիւղի ըղձք խաղասցէ.
Շաչիւն տարադիր քումըդ կապանաց յունկն իմ հնչեսցէ,
Մինչև թօթափեալ ձեռն իմ ըղձուսեր՝ ըզնօսին հատցէ:
Սիրտ իմ ցընծալից զի՛ լիցիս 'ի տես իմս Ամիլկարայ,
Եթէ այդպէս ինչ լուր անուանն ևեթ ըղձքն թինդըս տայ:
Անդ քեզ քաղցրացի արտօսր և թառաչ.
Տըխուր յիշատակք անցելոց վըշտաց՝
Քեզ՝ 'ի հեշտութիւն եղեն ընդ առաջ:

Կը շարունակուի:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ